

Արևմտահայ ազգային սահմանադրական շարժման սկզբնավորումը

Գասպարյան Քրիստինե

Հանգուցային բառեր. *արևմտահայություն, Թուրքիա, սահմանադրական շարժում, ազգային վարչություն, պայքար, բարեփոխումներ, լուսավորական գաղափարներ*

19-րդ դարի առաջին կեսին Օսմանյան կայսրությունն իրենից ներկայացնում էր սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող ժողովուրդների ամբողջություն, որի ամբողջականությունը պահպանվում էր բացառապես զենքի ու ուժի կիրառմամբ: 19-րդ դարի առաջին կեսին Եվրոպան ցնցած հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների լույսը չէր կրող իր ազդեցությունը չթողնել նաև թուրքական լճի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդների վրա, ովքեր պայքարի էլան՝ թոթափելու բիրտ ուժի և տգիտության դարավոր լուծը: Այդ լույսը, «հակառակ հին աւանդութեան, ... Արեւելք փոխանակ իր մէջ յղանալու, Արեւմուտքէն պիտի ըլլաք»¹:

Մեծ տերություններն օգտագործում էին հպատակ ժողովուրդների ցանկացած էլույթ՝ սուլթանի նկատմամբ ճնշում գործադրելու և Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար: Օսմանյան կառավարող շրջանների մի շարք առաջադեմ գործիչներ լավ էին հասկանում, որ այդ էլույթները կարող են կործանարար լինել կայսրության համար, ուստի կարևորում էին երկրում բարեփոխումների անցկացումը: Այդ գործիչները «երիտասարդ Թուրքերու հեռատես պետ»² հայտնի պետական գործիչ և դիվանագետ Մուստաֆա Ռեշիդ փաշայի (1800-1858) գլխավորությամբ սուլթանին առաջարկում էին Թուրքիայում բարենորոգումներ սկսել: Տեղի տալով նրանց հորդորներին՝ սուլթան Մահմուդ II-ը (1808-1839) մի շարք բարեփոխումներ իրականացրեց: 1830-ական թվականներին հիմնվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ, մի խումբ թուրք երիտասարդներ մեկնեցին Փարիզ ուսում ստանալու: Թուրք գործիչներն ուղարկվեցին եվրոպական տարբեր երկրներ՝ գիտատեխնիկական առաջավոր փորձն ուսումնասիրելու և «Եւրոպական ազգաց առաջադիմութիւններն»³ Թուրքիայում ներդնելու նպատակով:

Մահմուդ II-ին վիճակված չէր ավարտին հասցնելու բարենորոգումները: Նրա որդի սուլթան Աբդուլ Մեջիդը (1839-1861) «Թուրքիան եվրոպականացնելու» մեծ տերությունների պահանջը կատարելու նպատակով Ռեշիդ փաշայի և բարեփոխումների մյուս կողմնակիցների հորդորով 1839թ. նոյեմբերի 3-ին հրապարակեց Գյուլհանեի Հաթթը-շերիֆ (սրբազան հրամանագիր): Դրանով Թուրքիայում թանգիմաթի սկիզբ դրվեց, որը կայսրության բոլոր հպատակներին, առանց ազգային և դավանական խտրականության, խոստանում էր հավասարություն, կյան-

¹ Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը, 1910 Ընդարձակ օրացոյց Մ. Փրկչեան ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1910, էջ 206:

² Նույն տեղում, էջ 209:

³ Նույն տեղում, էջ 174:

քի, պատվի և գույքի ապահովություն, հարկահավաքման կապալային համակարգի վերացում և հարկերի արդար բաշխում, կանոնավոր զինվորագրություն և ընդհանուր զինապարտություն⁴: Իրականում այս բարենորոգումները ոչ թե «ներքին պահանջ մը գոհացնելու»⁵, այլ Եվրոպային հաճոյանալու և Թուրքիայի ներքին գործերից նրանց շեղելու միտում ունեին: Այդուհանդերձ, երկրի հասարակական, քաղաքական կյանքում որոշակի դրական տեղաշարժեր նկատվեցին, բացվեցին վարժարաններ, քրիստոնյաներին թույլատրվեց որպէս բժիշկներ ծառայել օսմանյան բանակում, բարեփոխվեց դատական համակարգը: Հաթթը - շերիֆը որոշակիորեն սահմանափակեց հայոց պատրիարքի դատական և հարկային իրավասությունները, ինչի սկիզբը դրվել էր մի փոքր ավելի վաղ: Դեռևս 1831թ. Կ. Պոլսի Կարապետ պատրիարքը ամիրաների պահանջով հրաժարական էր տվել, և Բարձր դռան հրամանով հրավիրվել էր ընդհանուր ժողով՝ նոր պատրիարք ընտրելու համար: Ժողովի կազմում, բացի ամիրաներից, ընդգրկվել էին նաև արհեստավորներ, եկեղեցական ավագ և աթոռակալ քահանաներ⁶: 1834թ. մարտի 19-ին ազգային հաստատությունների մատակարարումը կարգավորելու նպատակով պատրիարքարանին կից ստեղծվեց հանձնաժողով, որի կազմի մեջ ընդգրկվեցին 10 անդամներ, ովքեր պետք է վերահսկեին «ազգին գործոց, եւս ի բարուք կառավարութեան Հիվանդանոցին, Տնանկ Աղքատաց, Եւ դպրատանց»⁷:

Թանգիմաթի հրապարակումը, «գոյութեան կռուի բնագոյն ու մրցման անխուսափելի պահանջները»⁸ ստիպեցին Կ. Պոլսի հայությանը ձգտել բարձրագույն կրթության: Թուրքիայի պետական վարժարանները փակ էին քրիստոնյաների համար, ուստի ազգային ճակատագրով մտահոգված Պալյան, Սերվերյան, Օտյան և այլ գերդաստանների ամիրաները ընդունակ ու ուսումնաստեւչ հայ պատանիներին ուղարկում էին Եվրոպայի կրթական հաստատություններ, որոնք կրթություն ստանալով և վերադառնալով՝ «ծառայելին թէ ազգին և թէ՛ պետութեան»⁹:

Կարապետ ամիրա Պալյանը և Հովհաննես ամիրա Սերվերյանը ձեռնամուխ եղան Կ. Պոլսում ստեղծելու մի հաստատություն՝ հայ երիտասարդության կրթության և դաստիարակության գործը կազմակերպելու, «օտար կրթութեան հոսանքը կասեցնելու և եվրոպական կանոնադրութեամբ ուսումնարան մը ունենալու»¹⁰ նպատակով: 1836թ. պատրիարքի գլխավորությամբ հրավիրվեց ժողով, որտեղ որոշվեց Սկյուտարի Սբ. Երուսաղեմի վանքին կից բացել ձեմարան, որի ծախսերը հոգալու էր Երուսաղեմի վանքը՝ տարեկան վճարելով 120 հազար դուրուշ, իսկ ունևոր ընտանիքների ուսանողները վճարելու էին 3000 դուրուշ¹¹:

⁴ Օրմանեան Մ., Ազգապատում, Հատոր Գ, Պէյրուշ, 1926, էջ 3728:

⁵ Սիրունի Յ. Պոլիս եւ իր դերը, հատոր 2, Պէյրուշ, 1970:

⁶ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 137:

⁷ Տե՛ս Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1901, էջ 205; Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 158, 181:

⁸ Ատոմ, Ազգային սահմանադրութիւնը. Գիծեր մեր մշակույթի պատմութենէն, Կ. Պոլիս, 1914, էջ 26-27:

⁹ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 185:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 203; Ալպոյաճեան Ա.,

1839թ. սկսված հակամիբրայական պայքարը «երթալով սաստկացաւ եւ քսան տարի մը տեւեց Կ. Պոլսոյ հայութեան մէջ»¹²: 1840թ. պատրիարքարանին կից ձևավորվեց «դատանական խորհուրդ մը»¹³ կազմված կրոնական և աշխարհիկ ներկայացուցիչներից, իսկ հարկերի հավաքման և արքունի գանձարանին հանձնելու գործը հանձնվեց «ազգապետներուն»: Ազգային հաստատությունների համար ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով Կ. Պոլսի Հակոբոս պատրիարքը պատրիարքարանում «Մնտուկ մը»¹⁴ հաստատեց: Ժողովրդի նվիրատվություններից հավաքված միջոցներն օգտագործվելու էին ազգային հիվանդանոցի, աղքատների, ճեմարանի ու դպրոցների, ինչպես նաև պատրիարքարանի կարիքները հոգալու համար: Ֆինանսական մուտքերը տնօրինելու նպատակով պատրիարքը, ի հակակշիռ ամիրաների, ձևավորեց 24 հոգուց բաղկացած հոգաբարձուների խորհուրդ, որում ընդգրկվեցին յուրաքանչյուր էմսաֆությունից մեկական հոգի: Այս վարչությունն իր ժողովներին մասնակացելու հրավիրեց նաև ամիրաներին, սակայն վերջիններս մերժեցին՝ իրենց ավելի բարձր դասելով արհեստավորներից: Նրանք սկսեցին ամեն կերպ խոչընդոտել վարչության աշխատանքներին, դադարեցրին այն նյութական օգնությունը, որ տալիս էին հօգուտ գանձարանի, ճեմարանից հեռացրին իրենց հովանավորյալ աշակերտներին: Ճեմարանը գրկվեց դրամական միջոցներից և կանգնեց փակման վտանգի առջև: Հայտնվելով անելանելի դրության մեջ՝ 24 հոգուց բաղկացած ազգային վարչությունը հրաժարական տվեց:

Հակոբոս պատրիարքը երեք անգամ ամիրաներին հրավիրեց իր մոտ՝ ստեղծված դրությունից էլք գտնելու նպատակով, սակայն ապարդյուն: Ամիրաներին հաջողվեց պաշտոնանկ անել իրենց համար ատելի պատրիարքին և պատրիարքական գահին վերահաստատել իրենց կողմնակից Ստեփանոս Աղավուն:

1841թ. ապրիլին ավարտական միջոցառման ժամանակ ճեմարանի տնօրեն Հակոբիկ Մանուելյանը ուսանողներին ու նրանց ծնողներին ներկայացրեց ճեմարանի ֆինանսական ծանր դրությունը և հորդորեց «ստանձնել անոր պաշտպանությունը»¹⁵: Ներկաները՝ մոտ 300 հոգի, ստեղծեցին «Միական» անունով ընկերություն¹⁶, որի նպատակն էր պահպանել ճեմարանը՝ անկախ ամիրաների նյութական օժանդակությունից: Ընկերության անդամները պատրիարքից պահանջեցին անցագրատան հասույթը առաջվա պես հատկացնել ճեմարանին: Նրանք աղերսագիր հղեցին սուլթանին՝ խնդրելով պաշտոնապես վերահաստատել 24 հոգուց բաղկացած խորհուրդը՝ «որպես հոգաբարձու ճեմարանին և թե՛ իբր տեսուչ ազգային ելեւտից»¹⁷: Բարձր դուրը վավերացրեց 24 հոգաբարձուների

նշվ. աշխ., էջ 185:

¹² Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3724:

¹³ Ատոմ, նշվ. աշխ., էջ 30; Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 187-188:

¹⁴ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 212; Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 188:

¹⁵ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 192:

¹⁶ Նույն տեղում, էջ 192, 248:

¹⁷ Նույն տեղում, էջ 192:

պաշտոնը՝ որպես ազգային եկամուտների տեսուչ: Ամիրաները կրկին սկսեցին խանգարել վարչության աշխատանքները: Վիճակն ավելի վատացավ, երբ պատրիարքը հրաժարական տվեց, որից հետո «քսանչորսի» հանձնաժողովը դադարեց գործելուց: Ժողովուրդը դուրս եկավ փողոց՝ Բարձր դռնից պահանջելով վերահաստատել քսանչորսի իշխանությունը: Կառավարության հրահանգով ազգային վարչության անդամները ձերբակալվեցին: Այդ լուրն ստանալով՝ մոտ երեք հազար հոգի զինեպան Իսկանդերի գլխավորությամբ¹⁸ շարժվեցին դեպի արտաքին գործոց նախարարի նստավայրը՝ պահանջելով պատրիարքի և ամիրաների վարչության հրաժարականը: Նախարարը հանդարտեցրեց ժողովրդին և ազատ արձակել տվեց 24 հոգաբարձուներին, սակայն մի քանի օր անց ժողովրդի առաջնորդների մի մասը ձերբակալվեց և աքսորվեց, մյուսներին հաջողվեց թաքնվել և խուսափել պատժից: Կարճ ժամանակ անց Բարձր դուռն ընդունեց պատրիարքի հրաժարականը և բանտարկյալներին ազատ արձակեց:

1841թ. սեպտեմբերին ամիրաները նոր պատրիարք ընտրեցին Աստվածատուր Պոլսեցուն, ով դարձավ նրանց հյու կամակատարը: 1841թ. հոկտեմբերի 3-ին ձեմարանը փակվեց՝ «իբր պատճառ ազգին խռովութեան»: Ժողովուրդը կրկին ոտքի ելավ՝ հայտարարելով, որ չի կամենում «ստրուկ ու գերի ըլլալ Սեղանաւորաց»¹⁹: 1841թ. դեկտեմբերի 12-ին սուլթանի հրամանով 27 արհեստավորներ ստանձնեցին «ազգային էլեմուտի»²⁰ տնօրինությունը: Նոր վարչությունը ամիրաներից և պատրիարքից խոստումնագիր ստացավ՝ չխառնվելու ազգային վարչության գործերին: Սակայն ամիրաները կրկին դադարեցրին իրենց օգնությունը գանձարանին, իսկ կարճ ժամանակ անց վարչությունը կայսերական հրամանով զրկվեց պետական տուրքերը գանձելու իրավասությունից: Ազգային վարչության անդամները հրաժարական տվեցին, ամիրաներին առաջարկեցին իրենց ձեռքը վերցնել «ազգային գործերու վարչութիւնը», նրանք մերժեցին՝ պատճառաբանելով, թե Բարձր Դռնից հրաման ունեն «ազգային գործերուն չխառնուելու»²¹:

Ազգային վարչության անդամները ստիպված Բարձր դռանը վերադարձրին իրենց պաշտոնը հաստատող հրովարտակը: Ընդունելով նրանց հրաժարականը՝ Բարձր Դուռը հրամայեց նոր ազգային ժողով գումարել: 1842թ. նոյեմբերի 13-ին ամիրաները ստանձնեցին պատրիարքարանի վարչությունը: Նոր վարչությունը որոշեց ազգային յուրաքանչյուր հաստատության գործերի կառավարումը հանձնել առանձին անհատների, իսկ աղքատ ընտանիքների երեխաների կրթության հոգսը դնել «ազգային գլխաւոր կառավարութեան խնամքի»²² տակ:

1840-1841թթ. Իզմիրի և Կ. Պոլսի մտավորականներն սկսեցին քայլեր ձեռնարկել դպրոցների բարեկարգման և գրասպության ուղղությամբ: 1841թ. մարտի 1-ին Կ. Պոլսում բացվեց «Ուսումնական ընկերություն», որը նպատակ ուներ «աշ-

¹⁸ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 194: Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3731:

¹⁹ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 196:

²⁰ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3732:

²¹ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 199:

²² «Արշալոյս Արարատեան», Ջմրտնիա, 1842, 4 դեկտեմբերի, թիվ 115:

խարհաբառ եւ գրաբառ» գրքեր տպագրել²³: 1844թ. ամիրանները կրկին ժողով հրավիրեցին և պահանջեցին Աստվածատուր պատրիարքի հրաժարականը՝ նրան համարելով «ազգային գործոց բոլոր անկանոնութիւններուն պատասխանատու»²⁴: Պատրիարքը հրաժարական տվեց, նոր պատրիարք ընտրվեց ժողովրդի շրջանում հարգանք վայելող Մատթեոս Չուխաջյանը: Ամիրանները ձգտում էին նրան դարձնել իրենց կամակատարը, բայց Մատթեոս պատրիարքը, օգտվելով ամիրանների ու արհեստավորների հակասություններից, հայտարարեց, թե իր միանձնյա իրավասության տակ են նվիրապետական, ամուսնական և «կրօնական հանգամանք» ունեցող բոլոր հարցերը, իսկ ազգային վարչության իրավասությունը տարածվում է միայն կրթական ու տնտեսական խնդիրների վրա: Ամիրաններն այս հայտարարությունից վրդովվեցին, ինչից օգտվեցին «լուսավորեալ բանակին պատկանող տարրերը՝ թելադրութեամբ ու ղեկավարութեամբ Յակոբ Կրճիկեանի»²⁵: Ամիրաններն ու արհեստավորները որոշեցին մի կողմ դնել հակասությունները և պատրիարքի իրավասությունները սահմանափակելու նպատակով նոր ծրագիր մշակեցին՝ «հիմնված ժողովրդի ընտրողական սկզբունքի վրայ»²⁶: Որոշվեց ստեղծել «խառն տարրերէն» ընդհանուր ներկայացուցչական մարմին: Կազմվեց 30 հոգուց բաղկացած ազգային վարչություն, որից 16-ն ամիրաններ էին, 14-ը՝ արհեստավորներ:

1847թ. պատրիարքի առաջարկությամբ վարչությունը որոշեց կազմել երկու ժողով՝ հոգևոր և գերագույն, և դիմել կառավարությանը՝ արտոնություն ստանալու համար: Առաջարկությունն արժանացավ կառավարության հավանությանը, ինչիև նպաստեցին Հ. Կրճիկյանի «անձնական դիրքն ու կապերն»²⁷: Պատրիարքարանի գործերի տնօրինումը հանձնվեց 14 եկեղեցականներից կազմված հոգևոր և 20 արհեստավորներից կազմված Գերագույն ժողովներին: Գերագույն ժողովի «լոգֆէթ» ընտրվեց Հակոբ Կրճիկյանը, ով պետք է «ըլլար կառավարութեան հետ յարաբերութեանց միջնորդը, ներքին կարգադրութեանց հսկողը եւ ժողովներու դիւանները վարողը»²⁸: Ժողովների անդամներն ընտրվելու էին երկու տարին մեկ: Այս կարգը պահպանվեց մինչև 1860թ. և դարձավ «ազգային սահմանադրութեան տիրապետ սկզբնատրութիւնը»²⁹: Հետագայում այս ժողովները կոչվեցին Ազգային սահմանադրական կենտրոնական վարչության քաղաքական և կրոնական ժողովներ:

1846թ. Կ. Պոլսում հիմնադրվեց «Համազգեաց ընկերությունը», որի նպատակն էր բացել դպրոցներ, տպարաններ, կրթել հայ երիտասարդությանը: 1846թ. հոկտեմբերի 1-ին Սկյուտարի ձեմարանը վերաբացվեց, նրա «նիւթական հոգը»

²³ Մրմրեան Յ. Գ., 19-րդ դար և Յովհաննէս Պրուսացի Տերոյնեց», Կ. Պոլիս, 1908, էջ 74:

²⁴ Ալլպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 201:

²⁵ Ատոմ, նշվ. աշխ., էջ 32:

²⁶ Մարուխան, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում /1860-1910/, Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 10:

²⁷ Ատոմ, նշվ. աշխ., էջ 33:

²⁸ Օրմանեան Ս., նշվ. աշխ., էջ 3813:

²⁹ Նույն տեղում:

հանձնվեց 80 հոգուց բաղկացած խառը հանձնաժողովին, որի ղեկավարն էր Հովհաննես Հովույանը³⁰: 1848թ. կազմված հոգաբարձուների խորհուրդը գործեց մինչև 1852թ.: Ճեմարանի ֆինանսական վիճակը հաշվի առնելով՝ Գերագույն խորհուրդը որոշեց միավորել Ճեմարանն ու Ազգային հիվանդանոցի դպրոցը: 1850թ. Ճեմարանի գրադարանն ու շարժական գույքը փոխադրվեց Ազգային հիվանդանոց: Երուսաղեմի վանքը անկանոն կերպով մինչև 1862թ. Ճեմարանին հատկացնում էր տարեկան 50 հազար դուրուշ³¹: Ճեմարանը մեծ համակրանք ուներ ժողովրդի շրջանում և առաջին լուրջ խթանը դարձավ «ժողովրդի գիտակցության արթնացման գործում»³²:

Պատրիարքների դեմ ամիրաների, արհեստավորների, մտավորականների մղած պայքարը ոչ թե «պատրիարքական մենատիրության» դեմ էր, այլ «կրօնականի և աշխարհականի» պայքար էր, ազգային գաղափարի, «իբր ազգ ապրելու ... և զարգանալու իրավատիրության մաքառում»³³: Ազգային ոգու հաղթանակի գործում մեծ էր եվրոպական ազատամիտ գաղափարներով սնված հայ մտավորականության դերը, որոնք ուղի հարթեցին մեկ տասնամյակ անց ազգային սահմանադրության ձևավորման համար: Պատմությունը չի հիշատակում այդ գործիչների անունները, նրանց մեծ մասը մատնված է մոռացության, ինչպես «կռուի դաշտի վրայ նահատակուծ զինուորները, որոնց յաղթանակի փառքը զորապետները կը վայելէն»³⁴:

1848թ. ֆրանսիական հեղափոխությունը, «ոյր կայծերն ամենուրեք հրդեհ կձգեն», հայության շրջանում ևս «վառեց իւր կենսաւետ նշոյլներ»³⁵: Այն խորն ազդեցություն թողեց Փարիզում սովորող արևմտահայ երիտասարդության վրա, ովքեր գնալով ազատամտության, ժողովրդավարության, իրավահավասարության սկզբունքներով, ձգտում էին այդ վսեմ գաղափարներով վերափոխել նաև արևմտահայության կյանքն ու ճակատագիրը: 1848թ. Փարիզում սովորում էին 25-30 հայ ուսանողներ, բոլորն էլ ոգևորված ազգային վերածնության վեհ գաղափարով, սակայն այս թիվը բավարար չէր համազգային ընդհանուր շարժում առաջ բերելու համար: Այդ նպատակի իրագործման համար պարարտ հող էր անհրաժեշտ: Որպես այդպիսին հանդես եկավ Մխիթարյանների Մուրադյան վարժարանը, որը 1846թ. Իտալիայից փոխադրվել էր Փարիզ: Այս վարժարանը կրթեց հայ երիտասարդների մի ամբողջ սերունդ, որը հետագայում կանգնեց ազգային սահմանադրական շարժման ակունքներում: Փարիզի հայ երիտասարդության շրջանում ազատամտական գաղափարների ձևավորմանը նպաստեց նաև 1848թ. Փարիզում հայկական տպարանի բացումը՝ Ջանիկ Արամյանի նախաձեռնությամբ: Փարիզն այդ ժամանակ հանդիսանում էր հայության մտավոր կյանքը կերտող դարբնոցը, որտեղ «կդարբնուէր յեղաշրջումը թրքահայ մտքին, լեզուին, ...

³⁰ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 232; Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 249:

³¹ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 245:

³² Սարուխան, նշվ. աշխ., էջ 6:

³³ Ատոմ, նշվ. աշխ., էջ 43:

³⁴ Լույն տեղում, էջ 44:

³⁵ Ասատուր Հ., Մահմանադրութիւն եւ հայ ժողովուրդն, Կ. Պոլիս, 1879, էջ 15:

ժողովրդեան կեանքին»³⁶:

19-րդ դարի 30-40-ական թվականներին Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության ստացած հայ երիտասարդները, վերադառնալով հայրենիք, ձեռնամուխ եղան արևմտահայության կրթության և դաստիարակության գործին, զարկ տվեցին մամուլին, տպագրությանը՝ դառնալով «օգտակար հաստատութեանց նախաձեռնակիրներ»³⁷ և ազգային մտավորական շարժման առաջնորդներ: Այդ շարժման կարկառուն ներկայացուցիչներից է «ուսումնական և գրական միտքով օժտուած»³⁸ Հակոբ Կրճիկյանը (1806-1865), ով «ռահվիրաներեն մեկը պիտի դառնար հայ կյանքին մեջ սկիզբ առնող սահմանադրական շարժման»³⁹: Նա Մուստաֆա Ռեշիդ փաշայի զավակների ուսուցիչն էր: 1835թ. Ռեշիդ փաշան նշանակվում է Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան, իսկ Հ. Կրճիկյանը նրա միջնորդությամբ կարգվում է դեսպանատան թարգման: Փարիզում ապրած տարիները Կրճիկյանի համար զարգացման և «լայն հայեցողություններ ստանալու»⁴⁰ ժամանակաշրջան էին, երբ նա հասունացավ քաղաքականապես և գաղափարապես: 1838թ. Հ. Կրճիկյանը Ռեշիդ փաշայի հետ, ով նշանակվել էր Անգլիայում Թուրքիայի դեսպան, մեկնեց Լոնդոն և դարձավ օսմանյան դեսպանատան թարգմանիչ, ապա՝ գործակատար: 1840թ. Ռեշիդ փաշան դարձավ Թուրքիայի արտաքին գործերի նախարար, 1841թ. կրկին նշանակվեց Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան, 1843թ. կրկին վերադարձավ Կ.Պոլիս: Այս ողջ ընթացքում Հակոբ Կրճիկյանը նրա անբաժան ուղեկիցն ու խորհրդատուն էր: 1846թ. Ռեշիդ փաշան դարձավ Օսմանյան կայսրության մեծ վեզիր, իսկ Հ.Կրճիկյանը՝ նրա թարգմանիչը և խորհրդականը:

Հ. Կրճիկյանն իր ժամանակի «երոպական զարգացմամբ առաջին Օսմանեան պաշտօնատարն» էր, «ամենէն առաջընթաց»⁴¹ մտավորականներից մեկը և «իր ժամանակին օսմանցի դիվանագետներուն մեջ գրաւած է յատուկ տեղ մը»⁴²: Հ.Կրճիկյանը Սերովբե Վիչենյանի, Նիկողայոս Պալյանի և Նահապետ Ռուսինյանի հետ հայ ազգային գաղափարախոսության ձևավորման ճանապարհին հանդիսացավ «առաջապահները նոր միտքերու և գաղափարներու»⁴³, որոնց շուտով հետևեց Եվրոպայում կրթության ստացած արևմտահայության նոր սերունդը: Փարիզում ապրած տարիներին Հ. Կրճիկյանը սերտ կապեր ուներ Գրինյոնի երկրագործական բարձրագույն դպրոցում սովորող Գրիգոր Աղաթոնի, Գևորգ Սթիմառաճյանի և Հակոբ Ամասյանի հետ, որոնք «իբր լուսամիտ գաղափարներու» ռահվիրաներ, «նչ նուազ օգտակար հանդիսացան»⁴⁴ ազգային շարժման ձևավորման ու տարածման գործում: Նիկողոս Զորայանը՝ 1844-1847թթ., Խաչատուր

³⁶ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 231:

³⁷ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3880:

³⁸ Նույն տեղում, էջ 3812:

³⁹ Սիրունի Հ., Թանգիմաթ և հայեր, Պատմաբանասիրական հանդես, 1966, էջ 59:

⁴⁰ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 229:

⁴¹ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 230:

⁴² Ասատուր Հ., Կ. Պոլսյո հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 227:

⁴³ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 230, 238:

⁴⁴ Նույն տեղում, էջ 232:

Պարտիզպանյանը՝ 1844, 1848-1852թթ. Փարիզում գտնված տարիներին համախոհ են եղել Հ. Կրճիկյանի և Ն. Ռուսինյանի գաղափարներին: Նրանց գաղափարները կիսում էին նաև Փարիզում այդ տարիներին սովորող Անտոն և Սարգիս Պալյանները, Կարապետ Յուրուճյանը, Հովհաննես (Արզուման) Վահանյանը, Աբեթիկ Ներուզյանը, Գրիգոր Մոզյանը, Միքայել Խորասանճյանը, Հովհաննես Թյուսյուզյանը, Խաչիկ Կյուվուչյանը⁴⁵:

Նիկողայոս Պալյանը (1826-1858) Կարապետ ամիրա Պալյանի որդին էր, հոր հորդորով մեկնել էր Փարիզ՝ ճարտարապետություն ուսումնասիրելու: Նա «օժտուած էր չքնաղ ձիրքերով», Գ. Օտյանի, Ն. Ռուսինյանի «խորհրդակիցը և սրտակիցը եղած էր»⁴⁶: Ն. Պալյանը սուլթան Աբդուլ Մեջիդի Դոլմաբախչեի պալատի ճարտարապետն էր: Տաղանդավոր ճարտարապետ լինելուց զատ նա մեկն էր «հայ նոր վերածնունդի ախոյեաններէն» և «նախաձեռնողներէն ազգային սահմանադրութեան»: Ն. Պալյանի մահից 12 տարի անց Ն. Ռուսինյանը խոստովանում էր, թե սահմանադրական շարժումը Նիկողայոս Պալյանի «ջանից ու տքնութեանց արդիւնք է»⁴⁷:

1840թ. բժշկություն սովորելու նպատակով Փարիզ է մեկնում Նահապետ Ռուսինյանը (1819-1876), ով Հ. Կրճիկյանի և Ն. Պալյանի գաղափարակիցն ու համախոհն էր, ապա «խմորիչը այն շաղախին, որով պիտի պատրաստուէր ազգային զարգացման շէնքը»⁴⁸, ու կազմվեր և կյանքի կոչվեր Ազգային սահմանադրությունը:

1849թ. ապրիլի 27-ին Ն. Ռուսինյանի նախաձեռնությամբ Փարիզում ստեղծվեց «Արարատյան ընկերությունը», որին անդամագրվեցին Ֆրանսիայում բնակվող հայերն ու արևմտահայ ուսանողները: Ընկերության նպատակն էր «Հայ ազգին յառաջադիմութեան և պիտոյիցը» ծառայելը, «անոր կարօտությանց մեկուն հասնիլ»⁴⁹: Ընկերությունն առաջնային նպատակ չէր սահմանում, այլ նախատեսում էր Եվրոպայի ապահով բանկերից մեկում 100 հազար ֆրանկ դրամագլուխ հավաքել, ապա իր անդամների մեծամասնության հավանությամբ որոշել հստակ նպատակը: Ընկերության կանոնադրության մեջ շեշտվում էր, որ այն կրոնական և քաղաքական նպատակների չի հետապնդում: Ընկերության նախագահը, ատենադպիրը և գանձապետը պարտավոր էին ամիսը մեկ խորհրդակցություն անցկացնել՝ ընկերության գործերը կանոնակարգելու նպատակով, որին կարող էր մասնակցել ընկերության յուրաքանչյուր անդամ՝ առանց քվեարկության իրավունքի: Երեք ամիսը մեկ անգամ ընկերության ընդհանուր ժողովը պետք է քննարկեր հետագա քայլերն ու անելիքները⁵⁰: Ընկերության 1849թ. հունիսի 7-ի հայտարարության մեջ ասվում էր. «Ազգի մը ընտիր մասն ... միայն յանձն կ'առնէ հայրենեաց համար յօժարութեամբ գրկանքներ կրել: Ընկերութեան փափազը գլխաւորապէս ազգին դաստիարակութիւնը յառաջացնելու վրայ է»⁵¹: Ընկերու-

⁴⁵ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 233-234:

⁴⁶ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 258:

⁴⁷ Միրունի Հ., Պոլիս եւ իր դերը, էջ 378:

⁴⁸ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 232:

⁴⁹ «Արշալոյս Արարատեան», 1850, 23 յունիսի, թիվ 366, էջ 1:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում, էջ 2-3:

թյան անդամները գտնում էին, որ դաստիարակության համար միայն դպրոցներն ու վարժարանները բավական չեն, այլ անհրաժեշտ են ընկերություններ, որ բոլոր վայրերում դպրոցներ հիմնեն, հմուտ ուսուցիչներ պատրաստեն, գրքեր տպագրեն: Ընկերության անդամները լավ էին հասկանում, որ օտարության մեջ արտասանած իրենց վսեմ գաղափարները չէին կարող կյանքի կոչվել, եթե բուն հայրենիքում համախոսներ ու գործընկերներ չունենային, ուստի նրանք ձեռնամուխ եղան այդ գաղափարների տարածմանը մայր հայրենիքում: Այդ երիտասարդներն էին, որ «որք ազատ շունչով տոգորուն», վերադարձան Կ.Պոլիս՝ «սահմանադրական տաճարն բարձրացունելու»⁵²:

Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն, 1815-1887) 1834թ. մեկնել էր Փարիզ՝ բժշկություն սովորելու, իսկ արտոնագիրն ստացել 1840թ.՝ Իտալիայում: Վերադառնալով Կ. Պոլիս՝ նա դարձավ բժշկապետ, ապա Բերայի զինվորական վարժարանի ուսուցիչ: 1844թ. Ս. Վիչենյանը հրատարակեց «Մանկատաճութիւն» աշխատությունը, որտեղ առաջին անգամ հայ ծնողներին ներկայացնում էր դաստիարակության հիմնական սկզբունքները: 1853թ. նա Կ.Պոլսի «Ուսումնական խորհրդի» ատենապետն էր, մասնակցեց ազգային կանոնադրության մշակմանը:

Դեռևս 1840թ. Փարիզից Կ. Պոլիս վերադարձած Ս. Վիչենյանը ձեռնամուխ էր եղել հայ երիտասարդների շրջանում ֆրանսիական լուսավորական գաղափարների տարածմանը: Շուտով Կ. Պոլիս վերադարձան նաև Հ.Կրճիկյանը, Գր. Աղաթոնը, Գ. Սթիմարձյանը, Առաքել և Հարություն Տատյանները, Նիկողոսյոս Պալյանը: Նրանցից Հ. Կրճիկյանը, Ն. Պալյանը և Սերվիչենը դեկավարում էին ազգային գործերի վարչության «ազատականներու փոքրիկ խմբակը»⁵³ և հաճախ թաքուն պայքարում էին սեղանավորների դեմ: Սկզբնապես հեղափոխականորեն տրամադրված այս երիտասարդների շարքերը բավական նոսր էին, հազիվ մի քանի տասնյակ մարդ, սակայն շուտով համալրվեցին նոր անդամներով: Շարժումն իր մեջ ներառեց նաև արևմտահայության ամենաազդեցիկ ազգային գործիչների և ամիրանների զավակներին, ինչպիսիք էին Հովհաննես Տատյանի որդիներ Առաքել Միսակը, Հարություն Գարեգինը, Գրիգոր Միհրանը, Կարապետ Պալյանի և Պետրոս Խորասանձյանի և այլոց որդիները, ովքեր բոլորն էլ Եվրոպայում կրթություն ստացած երիտասարդներ էին⁵⁴:

1852թ. մի խումբ երիտասարդներ Կ.Պոլսում ստեղծեցին «Ընթերցասիրաց խմբակը», որի նպատակն էր ընթերցանության միջոցով հասարակության շրջանում զարգացնել մտավոր մշակույթը: Նիկողոս Պալյանի ջանքերով խումբը շուտով մատենադարան ունեցավ, որում հավաքվեց ավելի քան հազար կտոր գիրք:

1853թ. հոկտեմբերի 29-ին Կ. Պոլսում ձևավորվեց «Ուսումնական խորհուրդ», որի անդամներն էին Հակոբ Ամասյանը, Աբրահամ Երեմյանը, Կարապետ Յուրուճյանը, Հարություն Հովոյանը, Սարիմ Մաքսուտյանը, Նիկողոս Պալյանը, Խաչատուր Պարտիզպանյանը, Նահապետ Ռուսինյանը, Հովհաննես Վահանյանը, Սերովբե Վիչենյանը, Առաքել, Հարություն և Միմոն Տատյանները, Գրիգոր

⁵² Ասատուր Հ., Մահմանադրութիւն եւ հայ ժողովուրդն, էջ 15:

⁵³ Ալլոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 247:

⁵⁴ Տե՛ս Ալլոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 233:

Օտյանը: Խորհրդի ատենապետն էր Սերվիլչենը⁵⁵: Խորհուրդը նպատակ ուներ բացելու ազգային դպրոցներ, կազմակերպելու արևմտահայ երիտասարդների կրթությունը, պատրաստելու ուսուցիչներ, դասագրքեր տպագրելու:

Ղրիմի պատերազմից հետո մեծ տերությունները որպես հաշտության պայմանագրի նախապայման, Թուրքիայի առջև դրեցին բարեփոխումների հարցը: 1856թ. փետրվարի 18-ին սուլթանը հրապարակեց Հաթթը հումայունը, որը հաստատում էր 1839թ. Հաթթը-շերիֆի բոլոր դրույթները: Այն սուլթանի բոլոր հպատակների համար սահմանում էր քաղաքացիական հավասար իրավունքներ, դավանանքի ազատություն, խոստանում էր անցկացնել տնտեսական բարեփոխումներ: Այս բարեփոխումը որևէ արժեք չունեի, քանի որ նրա իրագործումը թողնվում էր սուլթանի և նրա կառավարության բարեհաճությանը⁵⁶, և նախորդի նման մնաց թղթի վրա: Հաթթը հումայունն իր արտահայտությունը գտավ նաև 1856թ. Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ կետում⁵⁷: Այն նախատեսում էր, որ յուրաքանչյուր քրիստոնյա հասարակություն որոշակի ժամկետում պետք է կազմեր հանձնաժողով և մշակեր ազգային կանոնադրություն:

Հրովարտակի հրապարակումից հետո արևմտահայության Գերագույն ժողովը ձևավորեց «Սահմանադրական հանձնաժողով», որի կազմի մեջ մտան 9 հոգևորականներ և 12 աշխարհիկ գործիչներ: Հանձնաժողովը պետք է մշակեր արևմտահայ ազգային և հասարակական կյանքին, կրոնին և մշակույթին վերաբերող ազգային կանոնադրություն: «Ուսումնական խորհրդի» անդամների մեծ մասը ներառվեց այս խորհրդի կազմում՝ դառնալով հանձնաժողովի գլխավոր գործող ուժին⁵⁸: Հանձնաժողովն իր աշխատանքներն ավարտեց 1857թ. փետրվարին: Նրա մշակած կանոնադրությունը քննարկվեց և հավանության արժանացավ Ազգային ընդհանուր ժողովում: Կանոնադրություն դեմ հանդես եկան մի խումբ պահպանողական եկեղեցական գործիչներ ու ամիրաներ, որոնց հաջողվեց խփանել կանոնադրության հաստատումը:

1859թ. Ս. Վիչենյանի, Ն. Ռուսինյանի, Գր. Օտյանի, Կ. Յուրուճյանի և այլոց ջանքերով ձևավորվեց նոր հանձնաժողով, որը լրամշակեց ազգային կանոնադրությունը և 1859թ. դեկտեմբերին ներկայացրեց ընդհանուր ժողովի քննարկմանը: Պահպանողականները պատրիարքի գլխավորությամբ կրկին փորձեցին ձախողել կանոնադրության հաստատումը: Սակայն սահմանադրական հանձնաժողովին հաջողվեց 1860թ. տապալել Գևորգ պատրիարքին և նրա փոխարեն պատրիարք ընտրել Սարգիս Գոյումճյանին, ով շարժման կողմնակից էր: Դրանից հետո ընդհանուր ժողովը հաստատեց ազգային կանոնադրությունը, որը Նահապետ Ռուսինյանի կողմից կնքվեց որպես «Ազգային սահմանադրություն»⁵⁹:

⁵⁵ Ասատուր Հ., Կ. Պոլսյո հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 240; Օրմանեան Ս., նշվ. աշխ., էջ 3886; Սիրունի Հ., Պոլիս եւ իր դերը, էջ 377:

⁵⁶ Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 489:

⁵⁷ Տե՛ս Սարուխան, նշվ. աշխ., էջ 13:

⁵⁸ Նույն տեղում, էջ 15:

⁵⁹ Ատոմ, նշվ. աշխ., էջ 43:

Сформирование западно-армянского национального конституционного движения

Гаспарян Кристине

Резюме

Ключевые слова: *западные армяне, Турция, конституционное движение, национальный совет, борьба, реформы, просветительские идеи*

Национально-освободительное движение европейских народов в первой половине XIX века оказало большое влияние на христианские народы, страдающие под господством Османской империи, которые восстали против турецкого ига. Великие державы использовали каждое выступление подчиненных народов для оказания давления на султана и вмешательства во внутренние дела Турции. Поэтому, чтобы угодить европейским странам, ряд передовых деятелей османских правящих кругов во главе с министром иностранных дел Мустафой Решидом Пашей внесли предложение о реформах в Турции. В 1839 по священному указу Абдула Меджида в Турции было положено начал танзимата. В результате реформ произошли некоторые позитивные сдвиги, которые нашли отражение в жизни западных армян.

Французская революция 1848 г. оказала большое влияние на учившуюся в те годы в Париже западноармянскую молодежь, которая, восторженная принципами свободы, демократии и равенства, стремилась в соответствии с этими великими идеями преобразовать жизнь и судьбу западных армян. Армянская молодежь, вернувшись на родину, приступила к делу образования и воспитания западных армян, активизировала работу прессы и печати. Эти молодые люди стали идеологами, организаторами и лидерами национального конституционного движения. Среди них были Акоп Крчикян, Серовбе Виченян, Николайос Палян, Нахапет Русинян и другие, которые впоследствии стали создателями национальной конституции.

The Establishment of Western Armenian Constitutional Movement

Gasparyan Kristine

Summary

Key Words: *Western Armenians, Turkey, Constitutional Movement, National Board, Struggle, Reforms, Illuminated Ideas*

The national-liberation movement of European peoples in the first half of the 19th century had a great impact on Christian people, who suffered under the Ottoman rule, who stood up to sip the Turkish yoke. The Great Powers used every speech of the indigenous people to exert pressure on the Sultan and interferes with the internal affairs of Turkey. So, in order to please the European countries, a number of prominent figures of the Ottoman ruling circles, led by Foreign Minister Mustafa Reshid Pasha, made a proposal for reforms in Turkey. In 1839 by a sacred decree issued by Abdul Mejid, in Turkey started a tanzimath. As a result of the reforms, some positive shifts have emerged, which have also been expressed in the life of Western Armenians.

In 1848, the French Revolution had a great impact on the Western Armenian youth, studying in Paris during those years, with the principles of ambitious liberty, democracy, and equality, seeking to transform Western Armenians' life and destinies with those superficial ideas. Those Armenian youth, returning to their homeland, embarked upon the education and upbringing of Western Armenians, activated the work of press and printing, and became the ideologists, organizers and leaders of the national constitutional movement. Among those young people were Hakob Krchikyan, Serovbe Vichenyan, Nikoghayos Palyan, Nahapet Rusinyan and others, who later became the founders of the national constitution.